#IDream ծրագիր

Դարձրու՛ երազանքդ իրականություն, մասնակցի՛ր IDream ծրագրին, ձեռք բեր բանկային ոլորտի տեսական և գործնական գիտելիքներ՝ հետագայում մեր թիմը համալրելու հեռանկարով:

Ծրագրի տևողություն՝	2-3 ամիս,
Ծրագրի անցկացման վայր՝	Բանկի բոլոր մասնաճյուղերում
Հայտարարության սկիզբ՝	Մարտ 24, 2022թ.
Հայտարարության ավարտ՝	Մարտ 31, 2022թ.

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

IDream ծրագիրը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր երիտասարդի ձեռք բերել տեսական և գործնական մի շարք գիտելիքներ վաճառքի, սպասարկման ոլորտում, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ բանկային գործում:
IDBank-ի կողմից կազմակերպված նմանատիպ կրթական ծրագրերի արդյունքում վերջին 3 տարիների ընթացքում մեր թիմը համալրվել է շուրջ երեք տասնյակ նորավարտ ուսանողներով, որոնք իրենց կարիերան սկսել և շարունակում են IDBank-ում:

Ծրագիրը նպատակ ունի.

- ուսանողներին տրամադրել տեսական գիտելիքներ ֆինանսավարկային ոլորտի վերաբերյալ,
- զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են բանկային ոլորտում սկսնակ աշխատակցին,
- ծրագրի մասնակիցներին ներսից ծանոթացնել Բանկի գործունեությանն ու կորպորատիվ մշակույթին,
- ծրագրի լավագույն մասնակիցներով համալրել Բանկում սկսնակ մասնագետների թափուր հաստիքները:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

- լինել բակալավրի 4-րդ կամ մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողներ,
- ունենալ լավ առաջադիմություն,
- ունենալ տնտեսագիտական/ֆինանսական մասնագիտացում,
- օտար լեզուների /ռուսերեն, անգլերեն/ իմացությունը կդիտարկվի որպես առավելություն,
- ունենալ հաղորդակցման լավ հմտություններ,
- և **ամենակարևորը՝** լինել նախաձեռնող, ստեղծագործ ու նորարար գաղափարներով և ոգևորությամբ լի:

Եվ այսպես, եթե մոտիվացված ու նպատակասլաց ես, համապատասխանում ես վերոնշյալ չափանիշներին և քեզ տեսնում ես բանկային և թվային ոլորտում, ապա օգտագործի՛ր հնարավորությունդ և միացի՛ր IDBank-ի թիմին:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է hr@idbank.am հասցեին ուղարկել վիդեո CV, առավելագույնը 1ր տևողությամբ, որտեղ կներկայացնես քո ինքնակենսագրականը, կնշես, թե ինչու պետք է ընտրենք հենց քեզ, և որն է քո ամենադրական և պայծառ կողմը: Խնդրում ենք **վիդեոն չկցել** նամակին, այլ ուղարկել միայն հղման տեսքով՝ տեղադրելով այն google drive-ում:
Ծրագրի պահանջներին համապատասխանելու դեպքում ընտրված թեկնածուները կհրավիրվեն թեստավորման և հարցազրույցի: